

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՇՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՑՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-2021/15-3-ԵՊԲՀ-1**

ք. Երևան

«___» _____ 20 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Բարկեն Թադևոսյանի, որը գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (ըրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակնու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 74517960 (յոթանասուն չորս միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁸ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

¹⁸ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Մատակարարման գինը նաև ներառում է Պատվիարտուի կողմից կատարվելիք մաքսագերծման և ներմուծման բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը և տուրքերը այդպիսիք լինելու դեպքում, և տվյալ դեպքում նշված վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը և տուրքերը ենթակա են փոխհատուցման Վաճառողի կողմից Պատվիարտուիին՝ Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ հաշվառկման և հաշվանցման ճանապարհով:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

1. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

2. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>

**<<Երևանի Մշխթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>**

Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2

Բանկ՝ «Հայֆինտերանկ» ՓԲԸ, Տեղյան մ/ճ

h/h 11500166513800

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 32-10

Բանկ՝ «ԷյՋ Էս Բի ՄԻ Բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/Հ 217002182558001

ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

(ստորագրությունը)

Կ.Տ

/ստորագրություն/

Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*	
1	33691162	Մեզի մանրէաբանական հետազոտման տրանսպորտային միջավայր	Uriline BioMerieux	Մեզի մանրէաբանական հետազոտման տրանսպորտային միջավայր՝ ուրիլայն տեսակի : Ֆորմատ 1 ագար պլայր/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում:	հատ	1320	660000	500	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	500		
2	33691162	Start 4 անալիզատորի համարնախատեսված ծ OWREN KOLLER	STA OWREN KOLLER Diagnostica Stago	Stago ընկերության Start 4 անալիզատորի համարնախատեսված STA OWREN KOLLER բուֆերային լուծույթ: Օրիգինալ: Ֆորմատ՝ 24 x15մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաբանակի համար ISO, CE Mark որակի վկայականների առկայություն:	հատ	49320	1035720	21	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	21		
3	33691162	Կոմբուր UX, 10 թեսթ	Combur-10-UX 100 Str. Roche Diagnostics	Ուրիսիս 1100 անալիզատորի համար նախատեսված Կոմբուր UX, 10 թեսթ (Combur UX 10 tests): Օրիգինալ: Մեզի մեջ	հատ	25200	5544000	220	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա	220		

				ուրոբիլինոգենի, գլուկոզի, բիլիռուբինի, կետոնների, տեսակարար կշռի, արյան, pH, սպիտակուցի, նիտրիտների, լեյկոցիտների որոշման թեստ-ստրիպ: Մեթոդ՝ ինդիկատորի գունավորում: Ֆորմատ՝ 100 ստրիպ սրվակում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:					ն 114 հասցեով		
4	33211140	Բիլիռուբին ուղղակի որոշման թեստ հավաքածու	BIL-D Gen.2, 350Test cobas c, integra Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված բիլիռուբին ուղղակի (Bilirubin direct, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 350 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հստ	15600	655200	42	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	42	
5	33211130	Խոլեստերինի որոշման թեստ հավաքածու	CHOL Hico Gen.2, 400Tests, cobas c, Int Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված խոլեստերինի որոշման թեստ հավաքածու (Cholesterol, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 400 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հստ	22560	360960	16	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	16	
6	33211160	Կրեատինինի որոշման թեստ հավաքածու	CREAJ Gen.2, 700Test,cobas c, Integra Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված կրեատինինի որոշման թեստ հավաքածու (creatinin jaffe, cobas integra, cobas c):	հստ	16320	881280	54	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114	54	

				Օրիգինալ: Ֆորմատ՝ 700 թեսթ տուփում/հատ: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:					հասցեով	
7	33211120	Գլյուկոզայի որոշման թեսթ հավաքածու	GLUC HK Gen.3, 800Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված գլյուկոզա որոշման թեսթ հավաքածու (Glucose HK large, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 800 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	23280	907920	39	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	39
8	33691159	ՑխԼ- խոլեսթերոլ որոշման թեսթ հավաքածու	LDL-Cholesterol, Gen. 3, 200 tests Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված ՑխԼ խոլեսթերինի որոշման թեսթ հավաքածու (LDL Cholesterol, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 200 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	102960	2265120	22	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	22
9	33211270	Ընդհանուր սպիտակուցի որոշման թեսթ հավաքածու	TP Gen.2,300Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված ընդհանուր սպիտակուց որոշման թեսթ հավաքածու (Total Protein Gen.2, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 300 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված,	հատ	9240	646800	70	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	70

				գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:						
10	33691159	Ասպարտատ ամինոտրանսֆերազի որոշման թեստ-հավաքածու	ASTL, 500Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորբաս Ինտեգրա և Կորբաս U311 անալիզատորների համար նախատեսված ԱՍՏ ասպարտատ ամինոտրանսֆերազի որոշման թեստ հավաքածու (AST cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 500 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	17280	846720	49	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	49
11	33691159	Ալանին ամինոտրանսֆերազի որոշման թեստ-հավաքածու	ALTL, 500Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորբաս Ինտեգրա և Կորբաս U311 անալիզատորների համար նախատեսված ալանին ամինոտրանսֆերազայի որոշման թեստ հավաքածու (ALT, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 500 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	17280	846720	49	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	49
12	33691159	Բիլիռուբին Ընդհանուր որոշման թեստ հավաքածու	BIL-T Gen.3, 250Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորբաս Ինտեգրա և Կորբաս U311 անալիզատորների համար նախատեսված բիլիռուբին ընդհանուր որոշման թեստ հավաքածու (BIL-Total Gen.2, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C	հատ	20520	1128600	55	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	55

				<p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:</p>						
13	33691159	Էլեկսիս սիֆիլիսի հայտնաբերման թեսթ-հավաքածու	Syphilis, 100 tests Roche Diagnostics	<p>Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս սիֆիլիս (Elecsys Syphilis) հայտնաբերման թեսթ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխիմիումի նեոստային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:</p>	հատ	251760	1510560	6	<p>ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով</p>	6
14	33691159	Էլեկսիս բարձր զգայության Տրոպոնին T քանակական որոշման թեսթ-հավաքածու	Troponin T hs STAT Elecsys, cobas e Roche Diagnostics	<p>Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս բարձր զգայության Տրոպոնին T STAT (Elecsys hs Troponin T STAT) քանակական որոշման թեսթ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխիմիումի նեոստային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում/տուփում: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C</p> <p>ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:</p>	հատ	137400	6870000	50	<p>ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով</p>	50
